ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԵՐԻՑՅԱՆ ԱՐԵՎԻԿ ԱՐՄԵՆԻ

Արտակարգ իրավիճակներում սոցիալ-հոգեբանական ադապտացիայի եվ հոգեբանական ռեսուրսների համահարաբերակցությունը

ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն (միջանձնային հարաբերություններ, ընտանեկան, խմբային գործունեություն)» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2016

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ գաա Գիտությունների ազգային ակադեմիայի Գիտակրթական միջազգային կենտրոնու

Գիտական ղեկավար՝ հոգեբանական գիտությունների դոկտոր **Նաիրա Ռաֆիկի Հակոբյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Հոգեբանական գիտությունների դոկտոր՝ Սեդրակ Աղասու Սեդրակյան

Հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Լիդա Արամյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայ ռուսական (Սլավոնական համալսարան)

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2016թ. Դեկտեմբերի 20--ին՝ ժամը 14..^{00}-ին, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի փիլիսոփայության և հոգեբանության թիվ 064 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 20 նոյեմբերի 2016 թ.:

Փիլիսոփայության և հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ **Կ.Ե.Վարդանյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Մարդկության զարգացման ներկա փուլում, երբ առկա են բնակլիմայական, սոցիալ-տնտեսական, սոցիալ-քաղաքական աննախադեպ իրողություններ, համաշխարհային հանրակցության ճգնաժամ, խոշորամասշտաբ տարաբնույթ տեխնածին և բնական աղետներ, անձի հոգեբանական ռեսուրսների և ադապտացիոն ներուժի ձևավորման, պահպանման և ամրակայման հիմնախնդիրները դառնում են օրակարգային:

Արտակարգ իրավիճակներին բնակչության ադապտացիայի, սթրեսա-դիմացկունության, կոմունիկատիվ հմտությունների ամրակայման հիմնախնդիրները այսօր արդիական են աշխարհի տարբեր բնակլիմայական ու սոցիալ-տնտեսական պայմաններում ապրող շատ ու շատ ժողովուրդների համար և խիստ հրատապ՝ նաև հայերի համար: Սխալված չենք լինի, եթե ասենք, որ առկա հիմնախնդիրները շոշափում են նաև անձի և սոցիալական հանրությունների գոյապահպանության հիմքերը: Նման իրադրության մեջ հոգեբանական գիտակարգի, մասնավորապես, սոցիալ-հոգեբանության առաջնահերթ խնդիրներից են արտակարգ իրավիճակներին անձի ադապտացիայի մեխանիզմները, դրանց թերի արտահայտվածության կամ աղավաղման պատճառահետևանքային կապերը և առանձնահատկությունները վերհանելը, վերլուծելն ու իմաստավորելը՝ լույս սփռելով կնճռոտ այն երևույթների վրա, որոնք պարարտ հող են ստեղծում անձի նյարդահոգեկան անկայունության, դեզադապտացիայի, հասարակությունում դեզինտեգրացիայի և ինքնամեկուսացման արդյունքում սոցիալ-հոգեբանական և ֆիզիկական օտարացման երևույթների համար:

Հիմնախնդրի գիտական մշակվածության աստիճանը: Արտակարգ իրավիճակներին անձի ադապտացիայի հիմնախնդիրը ուսումնասիրվել է հոգեբանության, սոցիոլոգիայի, հոգեբուժության, մարդաբանական և հասարակագիտական այլ գիտակարգերի շրջանակներում, այդուհանդերձ նրա բազմաբովանդակ ուսումնասիրությունը սոցիալ-հոգեբանական գիտակարգում բավականաչափ աղոտ է, թերի, կարոտ մեկնաբանման և նորովի լուսաբանման: Ուսումնասիրության կարիք ունեն մասնավորապես անձի սոցիալ-հոգեբանական մեխանիզմների ձևավորման, ֆունկցիոնալ համագործակցության և սոցիալականացման գործընթացում դրանց համակցված ամբողջականության, անձի արժեհամակարգի ձևավորման հիմնախնդիրները, որոնց մասնակիորեն իրենց հետազոտություններում անդրադարձել են՝

- Վ.Կրիսկոն՝ ադապատացիայի՝ որպես կենդանի օրգանիզմների և արտաքին միջավայրի փոխներգործության գործընթացի համատեքստում,

- Պ.Ս.Կուզնեցովը՝ տվյալ իրավիճակում անձի ներքին հնարավորությունների ու ընդունակությունների առավելագույն արտահայտության ու իրացման,
- Վ.Պ.Կազնաչեևը՝ ստատիկ և դինամիկ ադապտացիայի,
- Մ.Պ.Մկրտումյանը՝ որպես փոխակերպվող հասարակության՝ իբրև սոցիալական տագնապի միջավայրի,
- Ս.Վ.Բերեզինը՝ որպես մարդու՝ միջավայրի պայմաններին հարմարման ամբողջական գործընթացի հիմնական գործոնի,
- Ա.Նալչաջյանը՝ անձի ադապտացիայի՝ որպես սոցիալականացման փուլի դիտարկման,
- Ց.Պ.Կորոլենկոն՝ դժվարությունների հաղթահարման դրական փորձի ուսումնասիրման,
- Ա.Գ.Մակլակովը՝ անձնային ադապտացիոն ներուժի,
- Ն.Ռ.Հակոբյանը՝ անձի համապատասխան դերային սպասումների,
- Ռ.Լազարուսը՝ ինքնատիրապետման,
- Ս.Մադդին՝ կայունության հիմնադրույթների և այլ տեսանկյուններից:

Փաստենք, որ մինչ այժմ սոցիալ-հոգեբանական գիտակարգում չկա միասնական ըմբռնում և համապարփակ սահմանում՝ անձի սոցիալ-հոգեբանական ադապտացիայի մեխանիզմների վերաբերյալ, մշակված չեն նրանց բնութագրման չափանիշները, պարզ չեն հոգեբանական և միջավայրային ռեսուրսների համահարաբերակցության դրսևորումները, առանձնացված չեն սոցիալ-հոգեբանական այն լծակները, որոնք թույլ կտան հասկանալ անձի սոցիալական ադապտացիայի խնդիրները, հստակեցված չեն սոցիալ-հոգեբանական մեխանիզմների աղավաղման կամ թերի գործակցման պայմաններում անձի «ես»-ի ձևավորման ու զարգացման, հոգեկան առողջության պահպանման խնդիրները:

Հետազոտության նպատակն է՝ ներկայացնել և բազմակողմանի վերլուծության ենթարկել արտակարգ իրավիճակներում անձի հոգեբանական ռեսուրսների էությունը, բաղադրատարրերը, նրանց տեղն ու դերը սոցիալ-հոգեբանական ադապտացիայի գործընթացում՝ ստեղծելով կոնցեպտուալ տեսական մի մոդել, որի միջոցով հնարավոր կլինի ներկայացնել խնդրի սոցիալ-հոգեբանական կողմը և դրսևորման առանձնահատկությունները: Այդ նպատակին հասնելու համար անդրադարձել ենք հետևյալ կոնկրետ խնդիրներին՝

- ներկայացնել անձի ադապտացիայի սոցիալ-հոգեբանական բնութագրման տեսական և մեթոդաբանական հիմքերը.
- վեր հանել անձի հոգեբանական ռեսուրսների դրսևորման սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները.

• ներկայացնել արտակարգ իրավիճակներում անձի հոգեբանական ռեսուրսների դրսևորման կոմպենսատորային բնույթը.

• բացահայտել ադապտացիայի հոգեբանական ռեսուրսների բաղադրատարրերը, նրանց տեղն ու դերը անձի սոցիալ-հոգեբանական ադապտացիայի գործընթացում.

• ներկայացնել սոցիալ-հոգեբանական ադապտացիայի գործընթացում սոցիալ-դերային, սեռատարիքային առանձնահատկությունները արտակարգ իրավիճակների արժևորման և հաղթահարման համատեքստում.

• բացահայտել հոգեբանական ռեսուրսների ադապտիվ նշանակությունը և դրանց ապասոցիալականացման հետևանքները.

• վեր հանել անձի հոգեբանական ռեսուրսների և սոցիալ-հոգեբանական ադապտացիայի կոնստրուկտիվ մեխանիզմների ֆունկցիոնալ համահարաբերակցությունը.

• առաջարկել հանձնարարականներ՝ արտակարգ իրավիճակներին անձի ադապտացիայի սոցիոմետ մեխանիզմների ձևավորման և զարգացման ուղղությամբ՝ կապված հոգեբանական ծառայության ընթացքում համապատասխան թրեյնինգների ու ծրագրերի ուղղվածության միտումների հետ:

Հետազոտության օբյեկտն է՝ անձի հոգեբանական ռեսուրսների դրսևորումները և առանձնահատկությունները արտակարգ իրավիճակներին սոցիալ-հոգեբանական ադապտացիայի ընթացքում:

Հետազոտության առարկան է՝ անձի հոգեբանական ռեսուրսների բաղադրատարրերի համահարաբերակցությունը:

Հետազոտության վարկածը: Արտակարգ իրավիճակներին կոնստրուկտիվ սոցիալ-հոգեբանական ադապտացիայի գործընթացը պայմանավորված է անձի հոգեբանական ռեսուրսների համակցված բնույթով և արտահայտվում է ֆունկցիոնալ համագործակցությամբ:

Հետազոտության տեսամեթոդական հիմք են հանդիսացել Ս.Կ.Նարտովա-Բոչավերի անձի ինքնության, Լ.Ի.Անցիֆերովայի, Կ.Մուզդիբաևի, Մ.Պ.Մկրտումյանի դժվար կենսական իրադրությունների հոգեբանական ուսումնասիրությունները, Դ.Ա.Լեոնտևի անձնային ներուժի ուսումնասիրությունները, Ա.Գ.Մակլակովի անձի պոտենցիալի, Պ.Տիլլիխի, Վ.Ֆրանկլի փիլիսոփայական գաղափարները, Ֆ.Ե.Վասիլյուկի կրիտիկական իրավիճակի հաղթահարման, Ն.Ռ.Հակոբյանի անձի մարգինալության ուսումնասիրությունները, Տ.Շիբուտանիի և Ս.Ռուբինշտեյնի հետազոտությունները կրիտիկական ժամանակահատվածի և կյանքի ուղու շրջադարձի վերաբերյալ:

Հետազոտության մեթոդներն են՝ Ա. Մակլակովի և Ս.Չերմյանինի բազմաշերտ անձնային «Ադապտիվություն» հարցարանը, Կ.Ռոջերսի և Ռ.Դայմոնդի սոցիալ-հոգեբանական ադապտացիայի ախտորոշման

մեթոդիկան, մարտական հետտրավմային սթրեսային խանգարումների բացահայտման Միսսիսիպյան հարցաթերթիկի հեղինակային մոդիֆիկացումը, Թ.Հոլմսի և Ռ.Ռահեի սթրեսակայունության և սոցիալական ադապտացիայի բացահայտման մեթոդիկան, Սթրեսում դեզադապտացիայի ռիսկի և նյարդահոգեկան կայունության ախտորոշման մեթոդական մշակումը, «Մշակութա-արժեքային դիֆերենցիալ» մեթոդիկայի հիման վրա ստեղծված «Հոգեբանական ռեսուրսների արդյունավետության ախտորոշումը» և «Սոցիալական ադապտացման միջավայրի ախտորոշումը» մոդիֆիկացված հարցաշարերը, «Արտակարգ իրավիճակներին ադապտացման անձի հոգեբանական ռեսուրսների արդյունավետության ախտորոշումը բաց հարցերի միջոցով» հեղինակային թեստը, Օսգուդի «Սեմանտիկական դիֆերենցիալ» մեթոդիկան, անկետավորումը և վիճակագրական վերլուծությունը:

Հետազոտության գիտական նորույթն այն է, որ՝

• սոցիալ-հոգեբանական գիտակարգում սահմանվել է «սոցիալական ադապտացիայի ժառանգականություն» եզրույթը, վեր են հանվել վերջինիս էությունը և առանձնահատկությունները արտակարգ իրավիճակներին կոնստրուկտիվ հարմարման համատեքստում.

• բացահայտվել է անձի հոգեբանական ռեսուրսների դերակատարությունների ամբողջականությունը սոցիալ-հոգեբանական ադապտացիայի համատեքստում.

• լուսաբանվել և նորովի մեկնաբանվել է անձի հոգեբանական ռեսուրսների կոմպենսատորային բնույթը, առաջ է քաշվել «սոցիալական ադապտացիայի շրջադարձ» եզրույթը, վեր են հանվել դրա պատճառահետևանքային կապերը.

• բացահայտվել է հոգեբանական ռեսուրսների աղավաղման երևույթը արտակարգ իրավիճակներին անձի հարմարման գործընթացում.

• վեր են հանվել անձի հոգեբանական ռեսուրսների ձևավորման հնարավորությունները, մեխանիզմները և ուղիները հոգեբանական ծառայության գործընթացի միջոցով:

Հետազոտության տեսական նշանակությունը: Տեսական նշանակությունն այն է, որ նախ և առաջ մշակվել են սոցիալ-հոգեբանական տեսանկյունից անձի սոցիալական ադապտացիայի մեթոդաբանությունը և հայեցակարգը: Ցույց է տրվել, թե հոգեբանական ռեսուրսների ինչպիսի մեխանիզմների ազդեցությամբ է ընթանում անձի սոցիալ-հոգեբանական ադապտացիայի ամրակայման գործընթացը, որոնք են նրա բաղադրատարրերը, ինչպիսի փոփոխությունների է ենթարկվում այն տարբեր սոցիալ-դերային ու սեռատարիքային տարբեր խմբերում: Բացահայտվել են անձի հոգեբանական ռեսուրսների փոխկապակցվածությունը կոնստրուկտիվ ադապտացման դրսևորման հետ: Ներկայացվել է անձի հոգեբանական ռեսուրսների ֆունկցիոնալ համագործակցությամբ արտահայտված դրական

կոռելացիոն միտվածությունը ադապտիվ կարողությունների զարգացման գործում:

Հետազոտության գործնական նշանակությունը: Հետազոտության արդյունքները կարող են կիրառվել սթրեսածին իրավիճակներում անձանց սթրեսադիմացկունության բարձրացման, սոցիալական աջակցության արդյունավետ մեխանիզմների մշակման, հոգեբանական ռեսուրսների աղավաղման կամ թերի զարգացման պայմաններում անձանց հետտրավմատիկ խանգարումների հոգեշտկման, դեզադապտիվ վարքի կանխատեսման և նրա բացասական ներուժի մարման գործընթացում, արտակարգ իրավիճակում սոցիալականացման հասարակայնորեն կարևորվող դրսևորումների խթանման, ինչպես նաև՝ նման իրավիճակներում հայտնված սոցիալ-դերային խմբերի հետ տարվող հոգեթերապևտիկ և հոգեշտկող աշխատանքների ընթացքում, հոգեբանական ծառայության գործընթացում հիմնախնդրի լուծման ուղիների վերաբերյալ (հոգեբանական թրեյնինգների, զրույցների ու դիտարկումների, գիտական մեկնաբանությունների շնորհիվ):

Պաշտպանության ներկայացվող դրույթներն են՝

- ✓ Արտակարգ իրավիճակում անձի ադապտացման հոգեբանական ռեսուրսների համակցված բնույթը հանգեցնում է անձի ադապտիվ կարողությունների ձևավորմանը:
- ✓ Արտակարգ իրավիճակում անձի հոգեբանական ռեսուրսների ֆունկցիոնալ համագործակցությունը նպաստում է անձի ադապտիվ ընդունակությունների բարձրացմանը:
- ✓ Անձի ադապտացման հոգեբանական ռեսուրսները պայմանավորում են պոզիտիվ մտածողության կիրառումը սթրեսի պատճառների և էմոցիոնալ հաղթահարման ուղիների մշակման նպատակով:
- ✓ Անձի ադապտացման միջավայրային ռեսուրսները տարանջատվում են՝ ըստ արտակարգ իրավիճակում անձին շրջապատող և անձի հետ փոխգործող ինստիտուցիոնալ-կազմակերպչական (միջնորդավորված) և խմբային-համագործակցային (անմիջական) ռեսուրսների:
- ✓ Անձի ադապտացումը հանգեցնում է սոցիոմետ արժեհամակարգի ամրակայմանը, եթե հիմնված է հոգեբանական և միջավայրային ռեսուրսների դրական կոռելացիոն փոխկապվածության վրա:

Ատենախոսության փորձաքննությունը: Հետազոտության արդյունքները կիրառություն են գտել մի շարք ամսագրերում՝ «Իմաստություն» (Երևան 2015), «Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ» (2, Երևան 2015), «Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ» (3, Երևան 2015), «Գիտական հոդվածների ժողովածու» (Երևան 2015), «Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ» (2, Երևան 2016), "Чрезвычайные ситуации:

Теория, практика, инновации Материалы научно-практической конференции" (Гомель/ ГГТУ им. П. О. Сухого 2016):

2014 – 2015 թթ. ընթացքում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունում անց է կացվել 15 սեմինար քննարկում՝ վերոնշյալ թեմայով:

Ռուսաստանի Դաշնության արտակարգ իրավիճակների նախարարության անհետաձգելի հոգեբանական օգնության կենտրոնի Ուրալի մասնաճյուղի ղեկավարի հրավերով մասնակցել եմ 2016 թվականի մարտի 25-ից 26–ը Եկատերինբուրգում կայացած «Հոգեբանների պատրաստականությունը՝ ցուցաբերելու անհետաձգելի հոգեբանական օգնություն. մոտիվացում և կենսունակություն» խորագրով նիստին, որը անց է կացվել «Արդիականության բախումներ. անհատի և հանրության կենսունակություն» միջազգային բազմաոլորտ կոնֆերանսի շրջանակներում: Նիստի ընթացքում ներկայացվել են հետազոտության արդյունքները:

Ատենախոսության կառուցվածքն ու ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, գրականության ցանկից և հավելվածներից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվված է թեմայի արդիականությունը, ձևակերպված է աշխատանքի նպատակը, սահմանված են հետազոտության վարկածը, օբյեկտը, առարկան, ներկայացված են հետազոտության խնդիրները և տեսական գիտամեթոդաբանական հիմքերն ու մեթոդները: Բացահայտված է աշխատանքի տեսական և գիտական նշանակությունը, գիտական նորույթը, նշված են պաշտպանությանը ներկայացվող դրույթները:

Ատենախոսության **«Անձի ադապտացիայի հիմնախնդիրը արտակարգ իրավիճակներում»** խորագրով առաջին գլխում քննարկվել է անձի ադապտացիայի սոցիալ-հոգեբանական հայեցակետը: Այն բաղկացած է երեք ենթագլուխներից՝

1.1 Անձի սոցիալ-հոգեբանական ադապտացիայի ուսումնասիրման գիտատեսական հիմքերը

1.2. «Արտակարգ իրավիճակներ» հասկացության սոցիալ-հոգեբանական հայեցակետը

1.3 Անձի ադապտացիայի մեխանիզմները արտակարգ իրավիճակներում :

Առաջին ենթագլխում քննարկվել են անձի ադապտացիայի ուսումնասիրման գիտատեսական մոտեցումները: Անձի և սոցիալական միջավայրի փոխներգործությունը, անձի հարմարումը սոցիալական միջավայրի պայմաններին ու պահանջներին, այլ խոսքերով՝ անձի ադապտացիան, ներկայացվում է որպես միջդիսցիպլինար գլոբալ խնդիրներից մեկը, որը ներառվում է մի քանի հարակից դիսցիպլինների հասկացութային շրջանակներում՝ բժշկա-կենսաբանական, սոցիալ-հոգեբանական,

մարդաբանական, հոգեբանա-մանկավարժական և այլն: «Ադապտացիա» եզրույթը (լատիներեն՝ ad-դեպի, aptus-հարմար, օգտակար, adaptatio-հարմարում) մեկնաբանվում է որպես սոցիալական միջավայրին անձի հարմարման գործընթաց:

Այսպիսով՝ արդի գիտական գրականության մեջ հանդիպող ադապտացիայի տարբեր դասակարգումների և սահմանումների առկայությունը պայմանավորվում է բուն հասկացության միջդիսցիպլինար էությամբ: Սոցիալ-հոգեբանական հետազոտության համատեքստում անձի ադապտացիան առանձնահատուկ հետաքրքություն է ներկայացնում անձի հոգեբանական ռեսուրսների մոբիլիզացման տեսանկյունից: Այդ դիտակետի բացահայտումը հնարավորություն է տալիս քննելու անձի կողմից որոշակի սոցիալ-հոգեբանական դիրքի (ստատուսի) ձեռքբերման, տարբեր սոցիալ-հոգեբանական դերային գործառույթների տիրապետման գործընթացները: Ադապտացիայի գործընթացը, լինելով կենսական միջավայրին անձի հարմարման ընդհանուր պատկերի յուրահատուկ արտահայտություն, բնորոշվում է այդ եզրույթի տեսամեթոդաբանական հիմքերով և ենթարկվում է զարգացման գիտականորեն հիմնավորված օրինաչափություններին:

Երկրորդ ենթագլխում քննվել է «արտակարգ իրավիճակներ» հասկացության սոցիալ-հոգեբանական հայեցակետը: Անձի ադապտացիայի ուսումնասիրվածությունը գիտական հարթակներում ներկայացնելու համար բացահայտվել են այն իրավիճակների հասկացութային շրջանակները, որոնցում ի հայտ են գալիս անձի ադապտացիայի գործընթացները: Այդպիսի իրավիճակները հաճախ անվանվում են «կենսական դժվարություններ», «դժվար կենսական իրավիճակներ», «սթրեսային իրադրություններ», «էքստրեմալ իրավիճակներ»: Արտակարգ իրավիճակների այս ձևակերպումները թույլ են տալիս շեշտադրել հիմնախնդրի ուսումնասիրման սոցիալ-հոգեբանական հայեցակետը: Այն ներառում է անձի կենսագործունեության բնականոն ընթացքը խաթարող բոլոր այն իրադրությունները, որոնք, առաջացնելով անձի մոտ հոգեֆիզիոլոգիական համապատասխան դրսևորումներ, սոցիալապես ապակառուցողական են և արտահայտվում են սոցիալական միջավայրում անձի գոյատևման պայմանների անսպասելի և կտրուկ փոփոխություններով:

Երրորդ ենթագլխում քննվել են ադապտացման սոցիալ-հոգեբանական մեխանիզմները, որոնք բնորոշվում են հոգեֆիզիոլոգիական մեխանիզմների սոցիալական «մշակվածությամբ», սոցիալական նորմերի ու արժեքների միջոցով արտահայտված տվյալ արտակարգ իրավիճակի գնահատականով և սոցիալական միջավայրի նկատմամբ անձի սուբյեկտային հմտությունների ձևավորմամբ:

Անձի ադապտացիայի մեխանիզմների կոնստրուկտիվ և դեստրուկտիվ հատկանիշները ներկայացնում են սոցիալական նոր իրավիճակում անձի ինքնառեալիզացման և անձի ադապտացիայի կամ հարմարման ջանքերը: Այդ

երկու հատկանիշները բնութագրում են ադապտացման մեխանիզմների կոմպենսատորային բնույթը, որն ենթադրում է արտակարգ իրավիճակով պայմանավորված սոցիալական արտակարգ պայմաններում անձի հոգեբանական ռեսուրսների վերաբաշխման ու կառավարման արդյունքում արտակարգ իրավիճակի բացասական ազդեցության փոխհատուցում անձի համապատասխան սոցիալ-հոգեբանական դրսևորումներով:

Ատենախոսության երկրորդ գլուխը կրում է **«Անձի հոգեբանական ռեսուրսները և սոցիալական ադապտացիայի միջավայրը արտակարգ իրավիճակներում»** վերտառությունը և բաղկացած է երեք ենթագլուխներից՝

2.1 Սոցիալական ադապտացիայի միջավայրի բնութագրումը
2.2 Անձի հոգեբանական ռեսուրսների բաղադրատարրերը
2.3 Անձի հոգեբանական ռեսուրսների համահարաբերակցությունը սոցիալական ադապտացիայի միջավայրում

Առաջին ենթագլխում քննվել է «սոցիալական ադապտացիայի միջավայր» եզրույթը, որի միջոցով սոցիալականացումը դիտարկվում է որպես սոցիալական միջավայրի մեջ անձի ներթափանցման և հոգեբանական, սոցիալական, մշակութաբանական և այլ գործոններին հարմարման գործընթաց, իսկ սոցիալական ադապտացիայի միջավայրի տակ հասկացվում է հասարակությունը, որի ներսում, արտակարգ իրավիճակի պայմանների ներքո, ընթանում է անձի հարմարման գործընթացը: Այլ խոսքերով՝ սոցիալական ադապտացիայի միջավայրը ներկայացվում է որպես այն արտաքին սոցիալական միջավայրը, որի ներսում ընթանում են արտակարգ իրավիճակին անձի հարմարման և հաղթահարման սոցիալ-հոգեբանական գործընթացները:

Երկրորդ ենթագլուխ ներկայացվում են անձի հոգեբանական ռեսուրսների դրսևորման մի քանի բաղադրատարրեր՝ կոգնիտիվ, էմոցիոնալ և վարքային հաղթահարման ռեսուրսները, որոնք կբնութագրեն ադապտացիայի կոնստրուկտիվ և դեստրուկտիվ կոգնիտիվ հետևանքները: Առաջին դեպքում կներկայացվեն անձի կարողություններն ու գիտելիքը արտակարգ իրավիճակում գործելու և այդ իրավիճակը հաղթահարելու, դրանից հետո կանոնավոր կյանքին անցնելու ուղիների մշակման հարցում, իսկ երկրորդ՝ դեստրուկտիվ կոգնիտիվ հետևանքների դեպքում, առկա կլինեն ուշադրության թուլացումը, մտածողության սոցիոմերժ արտահայտվածությունը, կմատնանշվի կյանքի կանոնավոր ընթացքին անցնելու անձի անկարողությունը:

Երրորդ ենթագլխում քննվել է անձի հոգեբանական ռեսուրսների համահարաբերակցությունը: Տարբեր մոտեցումների վերլուծության հանրագումարում առանձնացվել են արտաքին միջավայրի, միջանձնային հարաբերությունների և զուտ հոգեբանական որոշ բնութագրականներ, որոնք բարձրացնում են անձի կայունությունը սթրեսային և հոգետրավմատիկ գործոնների նկատմամբ: Ադապտացիայի հոգեբանական ռեսուրսների

եռաստիճան մոդելը իրենից ներկայացնում է անձի հոգեկան առողջության սոցիալ-հոգեբանական գործոնը, որի առկայությունն էլ թույլ է տալիս անձի ադապտացիայի եզրույթը սահմանել որպես հոգե-սոցիալական հարմարման մեխանիզմ:

Երրորդ գլուխը կրում է **«Անձի ադապտացիայի հոգեբանական ռեսուրսների փորձարարական հետազոտություն»** վերտառությունը և բաղկացած է երեք ենթագլուխներից՝

3.1. Կիրառված մեթոդների նկարագիրը և հիմնավորումը
3.2. Փորձարարական հետազոտության հիմնական արդյունքները
3.3. Անձի ադապտացիայի կոնստրուկտիվ մեխանիզմների ձևավորմանն ուղղված մեթոդական հանձնարարականներ:

Փորձարարական հետազոտության մեջ ընդգրկվել են ընդհանուր թվով 2448 մարդ (1240 իգական և 1208 արական սեռի ներկայացուցիչներ): Հետազոտությունը անց է կացվել պիլոտային, հիմնական և ստուգիչ խմբերում: Պիլոտային հետազոտությունը միտված էր ուղենշելու թիրախային խմբերում առաջադրվող հարցադրումները և կիրառվող մեթոդները, որոնք իրենց կիրառությունն են գտել հետազոտության հիմնական փուլում, իսկ ստուգիչ խմբում ընդգրկվել են այն փորձարկվողները, որոնք համապատասխան թրեյնինգների ընթացքում մասնակցել են փորձարարական հետազոտության արդյունքները պարունակող հանձնարարականների կատարմանը:

Փորձարարական հետազոտությունն իրականացվել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունում, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության 10 մարզային ճգնաժամային կառավարման կենտրոններում, ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու բժշկական կենտրոնում», Լոռու մարզի «Սպիտակի բժշկական կենտրոնում», «Ժեստ» հոգեբանական կենտրոնում: Հետազոտությունն անց է կացվել տարիքային երեք խմբերի հետ:

Առաջին խմբի մեջ ընդգրկվել են 21-35 տարեկան 701 հոգի (351 կին և 350 տղամարդ), երկրորդ խմբի մեջ՝36-60 տարեկան 764 մեծահասակներ (376 կին և 388 տղամարդ), իսկ երրորդ խմբի մեջ՝ 61 տարեկան և ավել 800 հոգի (375 կին և 335 տղամարդ):

Տարիքային այս խմբերում ներառվել են սոցիալ-դերային հետևյալ միավորները ՝ «տուժածներ» (200 հոգի՝ 99 կին և 101 տղամարդ), «վկաներ» (462 հոգի՝ 240 կին և 222 տղամարդ), «մասնագետներ» (235 հոգի՝ 120 կին և 115 տղամարդ), «հարազատներ» (455 հոգի՝ 221 կին և 234 տղամարդ), «համայնք» (556 հոգի՝ 284 կին և 272 տղամարդ) և «վերապրողներ» (293 հոգի՝ 148 կին և 145 տղամարդ):

Հետազոտության մեջ ընդգրկվել են հրդեհներից, տեխնոծին վթարներից տուժած անձինք, նրանց հարազատները և վկաները, ինչպես նաև՝

համընդհանուր սոցիալական, ազգային նշանակություն ունեցող լայնածավալ արտակարգ իրավիճակներից (խոշոր երկրաշարժ, պատերազմ) տուժածները:

Ստորև նկարագրվում են փորձարարական հետազոտության ընթացքում կիրառված մեթոդներն ու դրանց հիմնավորումները.

«Մշակութա-արժեքային դիֆերենցիալ» մեթոդիկայի [3, էջ 218-219] հիման վրա ստեղծված **«Հոգեբանական ռեսուրսների արդյունավետության ախտորոշումը»**և **«Սոցիալական ադապտացման միջավայրի ախտորոշումը»:** Այս մեթոդիկաների կիրառումը նպատակաուղղված է բացահայտելու անձի հոգեբանական ռեսուրսների և սոցիալական ադապտացման միջավայրի բաղադրատարրերը: Հետազոտվողներին հանձնարարվել է գնահատել հոգեբանական ռեսուրսների և սոցիալական ադապտացման միջավայրի 20-ական հատկանիշ՝ ներկայացված հակադիր սեմանտիկ զույգերով, որից հետո՝ ընտրել դրանցից արտակարգ իրավիճակները հաղթահարելու արդյունավետությամբ աչքի ընկնող հատկանիշները: Առաջարկված հակադիր սեմանտիկ զույգ հատկանիշներն արտահայտում են՝ անձի հոգեբանական ռեսուրսների կոգնիտիվ (2, 3, 9, 10, 15 17, 20/), էմոցիոնալ (4, 6, 7, 8, 12, 14, 16) և վարքային (1, 5, 11, 13, 19, 18) բաղադրատարրերի, ինչպես նաև՝ սոցիալական ադապտացման միջավայրի ինստիտուցիոնալ-կազմակերպչական (1, 2, 3, 5, 9, 12, 15, 16, 19, 20) և խմբային-համագործակցային (4, 6, 7, 8, 10, 11, 13, 14, 17, 18) տարրերի գնահատականը: Պարտադիր պայման է՝ հատկանիշները չպետք է պարունակեն երևույթի անմիջական բնութագիրը:

Սոցիալ-դերային միավոր / **Էմոցիոնալ ռեսուրսներ**	**Հատկանիշների I զույգ**		**Հատկանիշների II զույգ**	
	Ադապտիվ լավատեսություն (%)	**Ադապտիվ հոռետեսություն (%)**	**Օգտակարություն (%)**	**Անզորություն (%)**
Տուժածներ	13	87	9	91
Վկաներ	49	51	12	88
Մասնագետներ	95	5	97	3
Հարազատներ	25	75	54	46
Համայնք	52	48	64	36
Վերապրողներ	44	56	34	66

Անձի ադապտացման էմոցիոնալ ռեսուրսների արտահայտվածությունը՝ ըստ սոցիալ-դերային միավորների

Նույն խնդրին ենք ծառայեցրել նաև **«Արտակարգ իրավիճակներին ադապտացման անձի հոգեբանական ռեսուրսների արդյունավետության ախտորոշումը բաց հարցերի միջոցով»** հեղինակային թեսթը, որի սահմաններում հետազոտվողներին առաջադրվել էր բնութագրել իրենց կյանքին և առողջությանը վտանգ ներկայացնող հավանական ռիսկերը և դրանց մարման ուղիները: Թեստի բովանդակային առանցքը կազմում էին արտակարգ իրավիճակներում անձի հոգեբանական ռեսուրսները ներկայացնող բաղադրատարրերը և սոցիալական կոնստրուկտիվ ադապտացման ընթացքում դրանց դրական կոռելացիոն միտվածության վերաբերյալ հարցադրումները: Այս թեստի միջոցով փորձարկվողները հնարավորություն ունեցան նշելու այդ հարցադրումների կարևորությունն ու հրատապությունը:

Փորձարկվողների պատասխանների հավաստիությունը խաչաձև ստուգելու նպատակով նրանց առաջարկվել էր գնահատել հավանական արտակարգ ռիսկերը Օսգուդի **«Սեմանտիկական դիֆերենցիալ»** մեթոդական մշակման միջոցով, ինչի արդյունքում հնարավորություն ընձեռվեց բացահայտելու արտակարգ տարբեր իրավիճակների կարևորությունը ըստ հարցվողների սոցիալական, սեռա-տարիքային և կրթական առանձնահատկությունների: Ուստի, այս մեթոդիկան ևս հնարավորություն տվեց հստակեցնելու արտակարգ իրավիճակների հասկացութային շրջանակը և դրանց հաղթահարմանն ուղղված հոգեբանական ռեսուրսների ֆունկցիոնալ համագործակցության ձևերը: Ա. Մակլակովի և Ս.Չերմյանինի բազմաշերտ անձնային **«Ադապտիվություն»** հարցարանի միջոցով հնարավորություն ընձեռվեց բացահայտելու արտակարգ իրավիճակում անձի ադապտիվ կարողությունները, նյարդահոգեկան կայունությունը և կոմունիկատիվ (հաղորդակցական) առանձնահատկությունները:



Անձի ադապտիվության ցուցանիշների դինամիկան՝ ըստ հոգեբանական ծառայության մասնակցության

Կ.Ռոջերսի և Ռ.Դայմոնդի սոցիալ-հոգեբանական ադապտացիայի ախտորոշման մեթոդիկայի կիրառումը ուղղված էր ներկայացնելու անձի հոգեբանական ռեսուրսների հետևյալ ֆունկցիոնալ համագործակցության տարրերը. անձի հարմարվողականությունը, համակրամքը իր «ես»-ի նկատմամբ, համակրանքը այլ մարդկանց նկատմամբ, հուզական բարեհարմարությունը, ներքին վերահսկողությունը, գերակայության ձգտումը, պրոբլեմից խուսափումը և այլն:

Մարտական հետտրավմային սթրեսային խանգարումները բացահայտող Միսսիսիպյան հարցաթերթիկի մոդիֆիկացված հարցաշարը ուղղված էր մատնանշելու հետտրավմային սթրեսային խանգարումների և կոնստրուկտիվ ադապտացման վիճակների տարբերություններն ու դրսևորումները: Այդ տվյալները վերստուգելու և վերլուծությունը հավաստի աղբյուրներով համալրելու նկատառումներով կիրառվել է **Թ.Հոլմսի և Ռ.Ռահեի սթրեսակայունության և սոցիալական ադապտացիայի բացահայտման մեթոդիկան՝** ուղղված սթրեսի դիմադրողականության բարձր, սահմանային և ցածր մակարդակների բացահայտմանը:

Եվ, վերջապես, արտակարգ իրավիճակներում միջնորդ-մասնագետների ֆունկցիոնալ առանձնահատուկ նշանակությունը կարևորելով, հարկ ենք համարել կիրառել սթրեսի ժամանակ նրանց նյարդակայունության աստիճանը

բացահայտող մեթոդիկան՝ **սթրեսում դեզադապտացիայի ռիսկի և նյարդահոգեկան կայունության ախտորոշումը**՝ որպես արտակարգ իրավիճակներում աշխատելու համար պիտանի կադրերի ընտրության մեթոդական հենքային լծակ: Այդ մեթոդիկան անց է կացվել ստուգիչ խմբում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.Անձի ադապտիվ կարողությունների ձևավորման հիմքում ընկած է հոգեբանական ռեսուրսների համակցված բնույթը:

Հոգեբանական ռեսուրսների համակցված բնույթը արտահայտվել է արտակարգ իրավիճակում կոգնիտիվ, էմոցիոնալ և վարքային ռեսուրսների դրսևորումների յուրահատկություններով:

Կոգնիտիվ ռեսուրսների գնահատման ցուցանիշները զարգացած են անհամաչափ և վկայում են միայն աչքի ընկնող նախապատրաստության հատկանիշի գերակայությամբ, ինչը պայմանավորված է արտակարգ իրավիճակում անձի անվտանգության ապահովման պահանջմունքով և կոմպենսացվում է էմոցիոնալ ու վարքային ռեսուրսների ավելի վառ արտահայտվածությամբ, ինչպիսիք են ադաապտիվ լավատեսությունը և օգտակարությունը:

Էմոցիոնալ և վարքային հատկանիշների կառուցվածքային փոխկապակցվածությունը կոմպենսացվում է կոգնիտիվ հատկանիշների որոշակի աղավաղված պատկերով ու անհամաչափ դրսևորումներով: Այս եզրակացությունը կարող է տեսամեթոդաբանական հիմք հանդիսանալ անձի սոցիալական կոնստրուկտիվ հարմարման գործընթացին ուղղված հոգեթերապևտիկ և հոգեշտկող աշխատանքների համար: Այս առումով լայն դաշտ է բացվում ոլորտի հետագա ուսումնասիրության համար՝ ուղղված անձի արժեհամակարգի, ազգային մենտալիտետի առանձնահատկությունների բացահայտմանը:

2. Արտակարգ իրավիճակում անձի ադապտիվ ընդունակությունների բարձրացումը արտահայտվում է հոգեբանական ռեսուրսների ֆունկցիոնալ համագործակցությամբ:

Ադապտիվ ընդունակությունների ամենաբարձր ցուցանիշները գրանցվել են միջնորդ-մասնագետների մոտ, որոնց հաջորդել են վերապրողների ու հարազատների ընտրախմբերը: Ադապտիվության ցուցանիշները գրանցվել են երկու փուլով՝ կախված արտակարգ իրավիճակից հետո հոգեբանական թրեյնինգների մասնակցությունից: Ինչպես երևում է ադապտիվության գրաֆիկական պատկերներից, գրեթե բոլոր ցուցանիշները ունեն աճի միտվածություն՝ արտահայտված երկրորդ փուլի հոգեբանական թրեյնինգների ու զրույցների արդյունքներով: Բացառություն է կազմում բարոյական նորմատիվության ցուցանիշները ներկայացնող գրաֆիկական պատկերը, որը

ցույց է տալիս այդ ցուցանիշի գրեթե անփոփոխ արդյունքները: Այդպես են դրսևորվում հասարակայնորեն ընդունված սոցիալական, ազգային և մշակութային կարծրատիպերը, որոնք ամրակայվում են անձի սոցիալականացման ընթացքում և հանդես են գալիս անձի ինքնության առանցքային դերակատարությամբ:

3.Կոնստրուկտիվ սոցիալ-հոգեբանական ադապտացիայի գործընթացը ուղղված է արտակարգ իրավիճակի հաղթահարման ուղիների մշակմանը և պայմանավորվում է անձի հոգեբանական ռեսուրսների կիրառումով:

Անձի պոզիտիվ ադապտացիայի գործընթացը հնարավոր է անձի հոգեբանական ռեսուրսների եռամաս բաղադրատարրերի համալիր գործարկման դեպքում, երբ արտակարգ իրավիճակի գիտակցումը կամ պատկերացումը ուղեկցվում է հուզական բարեհարմարության էմոցիոնալ դաշտով, որն էլ աստիճանաբար գերիշխող է դառնում անձի վարքագծի կազմակերպման գործում: Այս փոխազդեցությունը կրում է փոխադարձ բնույթ և ապահովում է «կոգնիտիվ – հուզական» երկբևեռային դեզադապտացիայի վերածումը կոնստրուկտիվ հարմարմանը՝ ուղղված արտակարգ իրավիճակի հաղթահարման ուղիների մշակմանը և արտահայտված համապատասխան վարքագծով:

4.Անձի ադապտացման միջավայրային ռեսուրսները ներկայանում են սոցիալական աջակցության ձևով և արտահայտվում են ինստիտուցիոնալ-կազմակերպչական ու խմբային –համագործակցային ռեսուրսների միջոցով:

Փորձարարական հետազոտության արդյունքները արտահայտում են հոգեբանական ռեսուրսների բաղադրատարրերի (կոգնիտիվ, էմոցիոնալ, վարքային) կոմպենսատորային բնույթը արտակարգ իրավիճակին մասնակից անձանց պատասխաններում:

Սոցիալ-հոգեբանական ադապտացիայի ախտորոշման մեթոդիկայի շնորհիվ բացահայտվել են անձի կոգնիտիվ, էմոցիոնալ և վարքային ռեսուրսների ֆունկցիոնալ համագործակցության ընթացքում ձևավորվող անձի հարմարվողականությունը, համակրամքը իր ես-ի նկատմամբ, համակրանքը այլ մարդկանց նկատմամբ, հուզական բարեհարմարությունը, ներքին վերահսկողությունը, գերակայության ձգտումը, պրոբլեմից խուսափումը և ֆունկցիոնալ համագործակցության այլ դրսևորումները: Տուժածների ընտրախմբում հարմարվողականության աստիճանը դրական կոռելացիոն կախվածության մեջ է անձի ներքին վերահսկողության և հուզական բարեհարմարության աստիճանից: Եվ հակառակն, պրոբլեմից խուսափելու միտումը նպաստավոր պայման է ինքնամեկուսացմանը և ցածր սթրեսադիմացկունությանը: Գերակայության ձգտումն ու համակրանքը իր ես-ի նկատմամբ նկատվել է առավելապես հարազատների և վերապրողների շրջանում: Իսկ վկաների և համայնքի ներկայացուցիչների տված պատասխաններում առանձնակի կարևորվում էր համակրանքը այլ մարդկանց

նկատմամբ, որն ուղեկցվում էր գերակայության ձգտումով: Այս մեթոդիկայի կիրառությունն ուղղված էր մատնանշելու կոնստրուկտիվ ադապտացիայի հիմնական դրսևորումները: Ադապտացիայի այդպիսի գործընթացը հնարավոր է անձի հոգեբանական ռեսուրսների եռամաս բաղադրատարրերի համալիր գործարկման դեպքում, երբ արտակարգ իրավիճակի գիտակցումը կամ պատկերացումը ուղեկցվում է հուզական բարեհարմարության էմոցիոնալ դաշտով, որն էլ աստիճանաբար գերիշխող է դառնում անձի վարքագծի կազմակերպման գործում: Այս փոխազդեցությունը կրում է փոխադարձ բնույթ և ապահովում է «կոգնիտիվ – հուզական» երկբևեռային դեզադապտացիայի վերածումը կոնստրուկտիվ հարմարմանը՝ արտահայտված համապատասխան վարքագծով: Այլ խոսքերով՝ ադպտացիայի պոզիտիվ ռազմավարությունը հիմնված է հոգեբանական ռեսուրսների կոգնիտիվ, էմոցիոնալ կամ վարքային բաղադրիչների փոխադարձ կոմպենսատորային դերակատարությամբ՝ ուղղված նշված բաղադրիչներից որևէ մեկի ակտիվացման միջոցով մյուս բաղադրիչների բացասական դրսևորումների մարմանը: Դրա վառ ապացույցն է ադապտիվության ցուցանիշների դրական դինամիկան, որը նկատվում է հոգեբանական ռեսուրսների կոմպենսացման մեխանիզմի կիրառմամբ կազմակերպված հոգեբանական թրեյնինգների ու զրույցների ընթացքում: Հոգեբանական ռեսուրսների բաղադրիչների կոմպենսատորային դերակատարությունը հստակեցվում է՝ ըստ որոշակի սոցիալ-դերային միավորների և ադապտացման խմբային-համագործակցային կամ կազմակերպչական-ինստիտուցիոնալ բաղադրատարրերի:

5.Արտակարգ իրավիճակին անձի ադապտացիայի դրսևորումը գտնվում է հոգեբանական և միջավայրային ռեսուրսների հետ դրական կոռելացիոն կախվածության մեջ՝ ձևավորելով ադապտացիայի բովանդակային կառուցվածքը և նպաստելով անձի սոցիոմետ արժեհամակարգի ամրակայմանը:

Վերոնշյալ դիտարկումները թույլ են տալիս եզրակացնելու հոգեբանական և միջավայրային ռեսուրսների դրական կոռելացիոն կախվածության մասին: Հարցվողների գրեթե բոլոր սոցիալ-դերային խմբերում ադապտացման միջավայրային ռեսուրսների շարքում կարևորվել է արտաքին տեղեկատվությանը հասանելի լինելու հանգամանքը:

Վերլուծության արդյունքում կարող ենք նշել հետևյալը. գրեթե բոլոր ընտրախմբերում (բացառությամբ միջնորդ-մասնագետների) գրանցվում է հոգեբանական կոգնիտիվ ռեսուրսների վերաբերյալ աղավաղված պատկերացումը և տեղափոխումը էմոցիոնալ ու վարքային դաշտ: Դրան զուգահեռ նկատվում է սոցիալական ադապտացման միջավայրի վերաբերյալ պատասխանների որոշակիությունն ու պահանջատիրությունը: Ադապտացման խմբային-համագործակցային բաղադրատարրը առավելապես կարևորվում է արտակարգ իրավիճակի բուն ընթացքում, իսկ կազմակերպչական-

ինստիտուցիոնալ բաղադրատարրի գերակայությունը կարևորվում է հետիրավիճակային փուլում և կրում է երկարաժամկետ ներգործության բնույթ: Այս նկատառումները կարող են հիմք ծառայել անձի սոցիալականացման գործընթացի և անձի սոցիոմետ արժեհամակարգի ձևավորման ուսումնասիրության գործում, քանի որ արտահայտում են արտակարգ իրավիճակից հետո անձի սոցիալ-հոգեբանական վերականգնողական առանցքային սպասումներն ու ակնկալիքները, որոնք կապվում են, հիմնականում, հասարակական ինստիտուտների հետիրավիճակային կազմակերպվածության ու արձագանքման հանգամանքների հետ: Վերոնշյալ ներկայացված արդյունքները, այսպիսով, փաստում են ադապտացման սոցիալ-հոգեբանական շրջադարձի երևույթի մասին, երբ հետիրավիճակային փուլում գրեթե բոլոր ընտրախմբերում նկատվում է միտում արժևորելու ոչ թե սեփական ադապտացումը արտաքին միջավայրին, այլ, հակառակը, սոցիալական արտաքին միջավայրի հարմարումը անձի կողմից ձեռքբերված նոր սոցիալ-դերային կարգավիճակին:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված հետևյալ հրապարակումներում:

1. Երիցյան Ա. Ա., Անձի կոմպենսատորային ադապտացման բնութագրումը արտակարգ իրավիճակներում, Իմաստություն, Երևան 2015, էջ 158-163:
2. Երիցյան Ա. Ա., Բնական աղետներն ու դրանց ազդեցությունը մարդու կենսագործունեության վրա, Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ №2, Երևան 2015, էջ 96- 105:
3. Երիցյան Ա. Ա., Մարդու և բնության փոխգործունեությունը. Համեմատական հետազոտության առանձնահատկությունները և հոգեբանական ասպեկտները, Գիտական հոդվածների ժողովածու, Երևան 2015, էջ 221-231:
4. Երիցյան Ա. Ա., Հակոբյան Ն. Ռ., Սոցիալական ադապտացիայի միջավայրի բնութագրումը անձի սոցիալականացման համատեքստում, Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ №2, Երևան 2016, էջ 78-87:
5. Ерицян А. А., Актуальные вопросы социально-психологического исследования адаптации личности в чрезвычайных ситуациях, Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ №3, Երևան 2015, էջ 106-113:

6. Ерицян А. А., Проблема адаптации личности в чрезвычайных ситуациях, Чрезвычайные ситуации: Теория, практика, инновации, Материалы научно-практической конференции, Гомель/ ГГТУ им. П. О. Сухого 2016, с. 347-353:

РЕЗЮМЕ

ЕРИЦЯН АРЕВИК АРМЕНОВНА

КОРРЕЛЯЦИЯ СОЦИАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКОЙ АДАПТАЦИИ И ПСИХОЛОГИЧЕСКИХ РЕСУРСОВ В ЧРЕЗВЫЧАЙНЫХ СИТУАЦИЯХ

Диссертация на соискание ученой степени кандидата психологических наук по специальности 19.00.03. “Социальная психология(межличностные отношения, семейная, групповая деятельность)”.

Актуальность диссертационного исследования обусловлена тем, что проблема социально-психологическоий адаптации в чрезвычайных ситуациях является насущной как для отдельной личности, так и для общества в целом. Формирование конструктивных форм социально-психологичской адаптации в чрезвычайных ситуациях особо актуально для нашей страны, где довольно высок риск землятрясений, а также техногенных и социогенных чрезвычайных ситуаций.

Научная новизна исследования:

1. В социально-психологической науке сформулировалось понятие "наследственность социальной адаптации".
2. Выявлена ролевая целостность психологических ресурсов личности в контексте социально-психологической адаптации.
3. Освещен компенсаторный характер психологических ресурсов личности, выдвинуто понятие "поворот социальной адаптации" и выявлены причинно-следственные связи его проявления.
4. Выявлено явление искажения психологических ресурсов в процессе преодоления чрезвычайных ситуаций.
5. Выявлены возможности, механизмы и пути формирования психологических ресурсов с помощью психологической службы.

Теоретическая и практическая значимость исследования.

Данные, полученные в результате проведенного нами исследования, уточняют и расширяют научные представления об особенностях проявления психологических ресурсов. Практическая значимость исследования состоит в

том, что результаты проведенного исследования могут быть использованы в прогнозировании и профилактике деструктивных проявлений социально-психологической адаптации личности в чрезвычайных ситуациях .

К лю че вые сло ва: **КОРРЕЛЯЦИЯ, СОЦИАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКОЙ АДАПТАЦИИ,**

1. **ЧРЕЗВЫЧАЙНЫХ СИТУАЦИЯХ,** особенностях проявления психологических ресурсов. прогнозировании и профилактике, компенсаторный характер, психологической службы. искажения психологических ресурсов